

և ե որ թէ՛ Հայոց թագաւորին , թագուհիին ու իրենց զաւակներուն ազատութեան համար եւ թէ՛ մեր ուրիշ գործերուն համար զրկած էինք սուլտանին , կիմանանք որ սուլտանն հաճած է հաւանութիւն տալ եւ խոստանալ , թէ երբ մեր զեապանը մեր յատուկ նամակովն իրեն զրկենք՝ մե՛ր սիրուն եւ պատուին համար՝ յիշեալ թագաւորն ու թագուհին իրենց զաւակներովը միասին ազատ պիտի արձակէ : Այս արձակման համար մեծ ուրախութիւն կզգանք մեր սրտին մէջ , որովհետեւ կը վստահինք իր խոստումին եւ ըրած զիջողութեանը , իբր թէ մե՛նք ըրած ըլլայինք , մասնաւանդ երբ այդ խոստումը կուգայ իրեն նման իշխանէ եւ սուլտանէ մը , որուն կը վայելէ պահել իր խոստումն եւ գործնականապէս կատարել իր հաւանութիւնը տուած ամէն բան , եւ որ միշտ բարեսիրութիւնով ու բարեպաշտութիւնով վարուած է անոնց հետ որոնք կա՛մ պատերազմով , կա՛մ զինամարտով եւ կամ բախտի մէկ ուրիշ բերումովը նուաճուած են իրմէ . ուստի այս պարագաներուն՝ իշխաններու եւ սուլտաններու կողմէ ցոյց տրուած բարեսիրութիւնն ու խոնարհամտութիւնը շատ գովելի են եւ անոնք իրենց նպաստաւոր կըլլան՝ մեծապէս աւելցնելով իրենց շնորհն ու պատիւը : Այս պատճառով վերոյիշեալ սուլտանին դեռ նո՛ր կը զրկենք մեր զեապանը , այսինքն մեր սիրելի խորհրդական Բոնանատ Սապէրա ասպետը , որ պիտի ներկայացնէ Ձեզ մեր ներկայ նամակը , եւ որ այս գործին եւ մեր ղեկավարութիւններուն կատարելապէս անդեակ է . նոյնպէս եւ անոր միջոցով կը զրկենք մեր այն խանդաղատական թղթերը , որոնցմով լիազօրութիւն կուտանք մեր զեապանին :

Եւ ինչպէս գիտենք , գերազնի՛ւ ամիրայ , որ թէ՛ Ձեր մեծաշուք ազնուականութեան ու բարձր աստիճանին եւ թէ Ձեր արժանիքին համար — որոնք պատշաճ են մեծ գովեստներով հռչակուելու — մեծ գիրք մը գրուած էք եւ շատ ազգեցութիւն ունիք սուլտանին քով , եւ ապա՝ քաջ գիտնալով նաեւ Ձեր սէրն ու համարումը դէպի մեր անձն ու մեր արքունի գերդաստանը , — գիտէինք եւս թէ բարեպաշտական եւ առաքինի գործեր ընելու հակամէտ եղած էք , — հաստատ կերպով կը յուսանք , որ այս գործին մէջ բարեջան պիտի գտնուիք եւ պիտի վարուիք նպաստաւոր ու համակիր կերպով՝ մեզի բարեկամական մեծ գործ մը եւ ծառայութիւն մը կատարելով , ինչպէս կը վայելէ ազնիւ մարդու մը որ հակամէտ է բարեպաշտութեան : Կը խնդրենք մեր բոլոր սրտով , որ՝ ի մեծարանս Աստուծոյ եւ ի պատիւ եւ ի սէր մեր՝ Ձեր լաւ գտած եղանակովը խորհուրդ տաք սուլտանին , որպէս զի անմիջապէս ազատ արձակէ յիշեալ թագաւորն ու թագուհին , իրենց զա-